**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ**
**ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

N 90
18 հունվարի 2023թ.

«Սլավստրոյ» ՍՊԸ-ի տնօրեն
Սլավիկ Պողոսյանին
Հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Դալարիկ գ., Շահումյան 48
/slav.stroi2018@mail.ru/

## *ԾԱՆՈՒՑԱԳԻՐ*

## *2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 31-ԻՆ ԿՆՔՎԱԾ N ԱՄԱՀ-ԱԱԱ-ԳՀԱՇՁԲ-22/45-3 ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի, ի դեմս համայնքի ղեկավար Ղազար Ղազարյանի (պատվիրատու) և «Սլավստրոյ» ՍՊԸ-ի, ի դեմս տնօրեն Սլավիկ Պողոսյանի (կապալառու) միջև 2022 թվականի օգոստոսի 31-ին կնքվել էր «ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղի մշակույթի տան հարակից այգու բարեկարգման աշխատանքների գնման» N ԱՄԱՀ-ԱԱԱ-ԳՀԱՇՁԲ-22/45-3 պայմանագիրը:

2022 թվականի նոյեմբերի 9-ին կնքվել է վերը նշված պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող թիվ 01 համաձայնագիրը «N ԱՄԱՀ-ԱԱԱ-ԳՀԱՇՁԲ-22/45-3 ծածկագրի պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ», որով հաստատված թիվ 2 հավելվածի համաձայն՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղի մշակույթի տան հարակից այգու բարեկարգման աշխատանքների սկիզբը հանդիսանում է 2022 թվականի նոյեմբերի 9-ը, ավարտը՝ 2023 թվականի փետրվարի 2-ը, սակայն Ձեր կողմից մինչ օրս որևէ աշխատանք չի իրականացվել:

Վերոգրյալը հաշվի առնելով, հիմք ընդունելով N ԱՄԱՀ-ԱԱԱ-ԳՀԱՇՁԲ-22/45-3 պայմանագրի 3-րդ կետի 3.1.4-րդ ենթակետի

ենթակետը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 706-րդ հոդվածի 1-ին մասը և 713-րդ հոդվածի 2-րդ մասը՝ ծանուցում ենք Ձեզ այն մասին, որ.

- ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Ղազար Ղազարյանի միակողմանի լուծում է «Սլավստրոյ» ՍՊԸ-ի, ի դեմս տնօրեն Սլավիկ Պողոսյանի հետ 2022 թվականի օգոստոսի 31-ին կնքված N ԱՄԱՀ-ԱԱՍ-ԳՀԱՇՁԲ-22/45-3 պայմանագիրը՝ 8.200.000 ՀՀ դրամ գումարի չափով:
- Դուք պարտավոր եք վճարել տուգանք 41.000 ՀՀ դրամ (հաշվարկ՝ 8.200.000x0,5%, հիմքեր՝ Պայմանագրի 5-րդ կետի 5.1-րդ, 6-րդ կետի 6.3-րդ մասեր) պայմանագրում նշված հաշվեհամարին՝ 3 /երեք/ աշխատանքային օրյա ժամկետում:
- «Պայմանագրի ապահովման» և «Որակավորման ապահովման» տուժանքի մասին համաձայնագրերի համաձայն՝ համապատասխան վճարման պահանջագրերը մեր կողմից կներկայացվեն Ձեր Ընկերությանը սպասարկող բանկ՝ պահանջագրերով նշված ամբողջ գումարը գանձելու նպատակով:

Սույն ծանուցագիրը հրապարակելու համար հիմք է հանդիսանում ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը, ինչպես նաև Պայմանագրի 8-րդ կետի 8.11 ենթակետը:

**ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի հունվարի 18

Արաքս համայնք

Կատարող՝ Իրավաբանական բաժնի պետ
Անժելա Մուրադյան
Հեռ.՝ 055775717